

Թ. ՄԱՆԿԱԼՅԱՆ

ՋԻՆԱՍՏԱՆԻ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԱՐԺՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1928

9(51)  
15-25

5 OCT 2011

5 OCT 2011

Ք. ՄԱՆԴԱԼՅԱՆ

9(51)  
Լ-25

# ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

419



Պ Ե Տ Ա Կ Ա Ն    Ն Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ Ե Ր Ե Ղ Ս . Կ

1928

*Handwritten signature*

24.06.2013

18001

ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ

ՀԱՅՄՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4770
ԳՐԱՂԵՊ. ՏԻՐԱԺ 1500



4308 g  
39

Ք. ՄԱՆԴԱԼՅԱՆ

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՉԻՆԱՍՏԱՆ

Անցյալ դարի կեսերից Չինաստանը վերածվում է ոտարերկրացիներից կախյալ մի յերկիր: Այն ժամանակ Չինաստանում էլ շտոյ դասակարգերի՝ մաջ-ջուրական և չին կալվածատերերի ու առևտրականների համառ ղեկավարու-թյունը, վոր ցույց տվին նրանք ոտարերկրյա կապիտալի թափանցմանը, վերջինս կոտրեց մի շարք ավերիչ պատերազմներով: Այդ պատերազմների շարանը բացեց Անգլիան անցյալ դարի քառասնական թվականներին, սկսելով Չինաստանի դեմ աշտյես կոչված հաշիչային պատերազմը, — մի պատերազմ, վոր մղվում էր հանուն անգլիական վաճառականների իրավունքի Չինաստա-նում հաշիչ վաճառելու և թունավորելու միլիոնավոր չինացիներ: Անգլիային հետևեցին Ֆրանսիան, Ռուսաստանը, Ճապոնիան և Գերմանիան: Հետևանքն այն յեղավ, վոր XX դարի սկզբին Չինաստանը — յեթե վոչ ձեռկանապես, ապա փաստորեն — յերկրագնդի խոշորագույն իմպերիալիստական պետությունների կողմից բաժանվեց «ազդեցությունների շրջանների»:

Չենքի ուժով հնազանդեցնելով Չինաստանը, ոտարերկրացիները պատե-րազմական տուգանք նշանակեցին Չինաստանի վրա, ստիպում էլին չին կա-ռավարությանը հարկադրական փոխառություններ կնքել, կաշտելով ծախու կառավարական չինոլիիներին: Մաքսային դանձումները, աղի մենաշնորհը և պետական յեկամուտի մի շարք այլ կարևոր աղբյուրներ յլեցին ոտարերկ-րացիներն՝ ի ապահովումն փոխառությունների: Ոտարերկրացի կապիտա-լիստներն ստացան մի շարք իրավունքներ և արտոնություններ, վորոնք նրանց դարձնում էլին Չինաստանի լիակատար տեր ու տնտեսներ: Կոնցեսիաների անվան տակ նրանք յլեցին և իրենց ձեռքն առան յերկրի լավագույն նավա-հանդիսաները, ձեռք բերեցին արտերկրության իրավունք, աշտինքն մի իրա-վունք, վորով ոտարահպատակներն անպատժելի էլին դառնում, անյեճա-դատ չինական դատարաններին, իրավունք՝ չինական ներքին հարկեր չվճա-րելու, իրենց ապրանքները համարյա թե առանց վորեւե մաքսի Չինաստան ներմուծելու և այլն:

Ոորը թափանցելով Չինաստանի տնտեսական կյանքի մեջ, քանդելով հին-նահապետական և ավատական հարաբերությունները չինական գյուղում, առաջացնելով առևտրա-վաչխառվական կապիտալի ծաղկում և արագացնե-լով միլիոնավոր չին գյուղացիների քայքայումը, ոտարերկրյա կապիտալը

միևնույն ժամանակ խանգարում էր Չինաստանի արտադրական ուժերի դար-  
պացումը: Նա Փարբիկաներ և գործարաններ չէր կառուցում Չինաստանում,  
վարովհետև վոչ մի գործարան չէր կարող տալ այնպիսի շահույթ, վորպիսին  
ստանում էր նա հաշիչի վաճառքից, սպեկուլյացիաներից և բանկային խաղե-  
րից:

1911 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիությունը քայքայվում էր: Հողագուրի դարձած գյուղացիները  
քաղաք էլին գնում աշխատանք փնտռելու, բայց իրենց ձեռքի ուժի գործա-  
դրություն տեղ չէին գտնում: Չինաստանում ծաղկյալ դրություն մեջ գտնվող  
արհեստա-տնայնագործական արդյունաբերությունը դեպի անկում էր դե-  
մում՝ չինական շուկան հեղեղած ոտարերկրյա ապրանքների մրցման հետե-  
վանքով: Առևտրականները և առևտրական դարձած կալվածատերերը—դրանց  
այն մասը, վոր անմիջականորեն կապված էր ոտարերկրյա կապիտալի հետ—  
դժգոհ էլին անբարոյականացած մանջուրական արխատուհրատիայից ու ծախու-  
շինովիկներին, վորոնք, յերկրի բոլոր բնական հարստությունները դիջելով  
ոտարերկրացիներին, չին բուրժուազիային լուի փշրանքներն էլին բաժին թո-  
ղել: 1911 թվի հեղափոխության զրդապատճառներից մեկն էլ այն էր, վոր  
չին կառավարությունը խլեց տեղական բուրժուազիայից մի շարք նահանգնե-  
րում յերկուսուկիներ անցկացնելու իրավունքը և հանձնեց այն ոտարերկրյա  
կապիտալին:

Մանջուրական միապետությունը ողի մեջ կախվեց: 1911 թվի հոկտեմբե-  
րի 10-ին Ու չանում բռնկած հեղափոխության հետևանքն այն յեղավ, վոր այդ  
միապետությունն ընկավ և Չինաստանում հանրապետություն հաստատվեց:  
Սակայն հեղափոխությանը չէր ուղեկցում լայն զանգվածային շարժում. նա  
դեռևս չէր կարողացել ցնցել մասսաներին, յերբ ազատամիտ կալվածատերերն  
ու առևտրական բուրժուազիան հեռացան նրանից, ըլուկ կազմելով ունակցիոն  
կալվածատերերի հետ: Մանր-բուրժուական ինտելիգենցիան, վորին հեղա-  
փոխության այլքը իշխանության գլուխ բարձրացրեց (Սուեն-Յաթ-Սենը չի-  
նական հանրապետության առաջին պրեզիդենտն յեղավ... մի քանի շարա-  
թով) և վորը յերազում էր Չինաստանի ազատ կապիտալիստական դարդաց-  
ման մասին, հետ մղվեց և ապա բոլորովին դեն չարտվեց: Իմպերիալիստները  
գրծադրեցին տնտեսական և քաղաքական ճնշման բոլոր միջոցները և կասեց-  
րին չինական հեղափոխության առաջընթացությունը: Չինաստանում հանրա-  
պետություն հաստատելը ունեցավ միայն այն հետևանքը, վոր Չինաստանը  
բաժանվեց համարյա ինքնուրույն պետական միավորների, վորպիսի դրու-  
թյունն արհեստականորեն պահպանում են միմյանց դեմ կոլոզ իմպերիալի-  
ստական իմբալները: Նահանգները վերածվել են իսկական նախարարություն-  
ների, վորտեղ անասճամն իշխանություն ունի դու-ձյուն, նահանգապետը:  
Սկսվեցին ներքին պատերազմներ, վորոնք խորացրին Չինաստանում ստեղծ-  
ված քաոսը: Գրանով ոտարերկրյա իմպերիալիստների համար բացվում էր  
չահվելու նոր և ամենահարուստ աղբյուր—դենքի վաճառքով, չին միլիա-  
րիստների պատերազմները սվեկուլյացիայի առարկա դարձնելով, դրամա-  
կան սխտեմում և չափ ու կշռի սխտեմում ստեղծված քաոսից սղտվելով, չին

ժողովրդի անթիվ աղետներն ոգտագործելով, անգլիական, ճապոնական և  
այլ կապիտալիստները ջրփում էլին հսկայական գերշահույթներ (անգլիա-  
կան Հոնկոնգ-Շանհայան բանկի տարեկան դիվիդենտներն անցնում են 50 տո-  
կոսից):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
ԺԱՄԱՆԱԿ

Ապրանքների ներմուծումը Չինաստան պատերազմող յերկրներից հա-  
մաշխարհային պատերազմի ժամանակ խիստ կրճատվեց: Այդ պատճառով  
իմպերիալիստները հարկադրված էլին հաշտվել Չինաստանում տեղական  
արդյունաբերության արագ թափով ծավալվելու փաստի հետ: Սկսվեց յերկրի  
ինդուստրացման բուռն շրջանը: Ելքտրական կայանների թիվը 1913 թվին  
12 էր, իսկ 1925 թ. հասավ 400-ի, էլեկտրի թիվը բաժրակեղենի մանածա-  
դործության մեջ 1911 թվին 831.106 էր, 1918 թվին հասավ 1.650.000-ի, իսկ  
1922 թվին բարձրացավ 3.211.768-ի: Աժիի արդյունահանումը 1917 թվից  
մինչև 1923 թվին ավելացավ ավելի քան յերկու անգամ, իսկ յերկաթահանքի  
արդյունահանումը չորս անգամ: 1910—1913 թվերին սարքավորման մեքենա-  
ների տարեկան միջին ներմուծումը հաշվվում էր 1/2 միլիոն տաել (տաելը  
մոտ 1 ու 40 կոպեկ է), իսկ 1922 թվին բարձրացավ մինչև 41 միլիոն տաելը:

Չինական յերիտասարդ արդյունաբերության դեմ մրցելու համար իրենք  
իմպերիալիստներն ստիպված էլին արդյունաբերական ձեռնարկություններ  
կառուցել Չինաստանում, վորտեղ բանվորական ուժի էթանությունը և մա-  
սամը ել հումույթի աղբյուրների մոտիկությունը հնարավորություն էլին  
տալիս նրանց ապրանքները շուկա հանել նշանակելի չափով իջեցրած գներով:  
Այս ճանապարհը բռնեց ամենից առաջ ճապոնիան, վորը կառուցեց Չինաս-  
տանում տասնյակ խոշորագույն մանածագործական Փարբիկաներ, աղացման,  
յուղահան և այլ ձեռնարկություններ: Անգլիան ևս հարկադրված յեղավ, ճիշտ  
է, սահմանափակ թվով, իր ձեռնարկությունները կառուցել Չինաստանում:

1919 ԹՎԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Արդյունաբերության հետ ծնվեցին նաև չինական պրոլետարիատը և չի-  
նական արդյունաբերական բուրժուազիան: Սակայն վերջինս հեռու յեր Չի-  
նաստանում իրեն տեր ու տիրական զգալուց: Ամբողջ հանքային արդյունա-  
բերությունը և համարյա յերկրի բոլոր յերկաթուղիները գտնվում էլին ս-  
տարերկրացիների (գլխավորապես անգլիացիների) ձեռքին կամ նրանց վե-  
րահսկողության տակ: Ոտաբահպատակները մենաշնորհյալ դրություն տեր  
էլին նավադնացության ասպարիզում, վորտեղ չինական կապիտալի բաժինը  
սարողության մեկ յերրորդից պակաս էր նույնիսկ այնպիսի ներքին ջրային  
ճանապարհի նավադնացության մեջ, վորպիսին Յանձե դետն է. ճապոնա-  
կան կապիտալն աստիճանաբար վճռական դեր ձեռք բերեց բաժրակեղենի մա-  
նածագործության մեջ: Արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերում,  
նույնիսկ թեթև արդյունաբերության մեջ, չինական կապիտալը հանդիպում  
էր իրենց արտոնություններով և միլիտարիստների աջակցությամբ դիմված

ոտարահպատակները մրցման: Ներքին առևտրի և բանկային դործի առյուծի բաժինը դանդում էր ոտարերկրացիներին կամ «կոմպրադորներին», այսինքն ոտարերկրյա կապիտալի սոսկական միջնորդ և գործակալ հանդիսացող չին առևտրականներին ձեռքին:

Ոտարերկրյա այս ստրուկտուրան ամենից սուր կերպով զգաց յերիտասարգ չինական արդյունաբերական բուրժուազիան պատերազմից հետո, յերբ պատերազմի ընթացքում նրա ունեցած հաջողությունները զերոյի էյին հաստատարեցին ոտարերկրյա մրցմամբ: Չինական շատ ձեռնարկություններ փակվեցին, մեծ թվով ֆաբրիկաներ զնեցին ճապոնացիք: Չինական ազգային բուրժուազիան տեսավ, թե վորքան միամիտ էյին իր պատրանքներն ազատ մրցման միջոցով ոտարերկրացի կապիտալիստներին Չինաստանից դուրս մղելու վերաբերմամբ: Իմպերիալիստները, դաշնակցած միլիտարիստներին, ֆեոդալներին, կոմպրադորներին և վաշխատուհաններին հետ, կանգնեցնում էյին չինական ազգային արդյունաբերական բուրժուազիայի ճանապարհին հազարավոր արգելափայտեր. միանական ազգային շուկայի բացակայությունը, ներքին հարյուրավոր մաքսատների գոյությունը յերկրում, չափ ու կշիռի միանական սիստեմի բացակայությունը, դյուզացիական դանդախանների դնողունակությունը աստիճանական անկումը—այս բոլորն, ի հարկե, չեր կարող նպաստել չինական բուրժուազիայի աճմանը, թեև միևնույն ժամանակ հեշտ վաստակի աղբյուր էր հանդիսանում իմպերիալիստներին և նրանց չին դաշնակիցների համար: Այս բոլորը մղում էր չինական ազգային բուրժուազիային դեպի պայքար իմպերիալիզմի դեմ, —մի պայքար, վորը 1919 թվից ընդունեց ազգային ազատագրական շարժման ձևերը:

1919 թվի մայիսի 4-ին չինական բուրժուազիայի առաջավոր թիւր—ուսանողությունը—հրապարակ յեկավ մի բողոքով ընդդեմ վերսայյան հաշտությունից պայմանագրի ստորագրման, քանի վոր դրանով ճապոնիային էր տրվում Չինաստանի Շանդուն նահանգը: Ամբողջ յերկրում բարձրացավ բանվորների և առևտրականների ցույցերի ու գործադուլների ալիք, սկսվեց ճապոնական ապրանքների բոյկոտը: Բուրժուազիան, հակամիլիտարիստական շարժմանը մասնակցություն կանչելով պրոլետարիատին և մանր—բուրժուազիային, հույս ունեց նրանց դժգոհությունը վրա հասած անտեսական լճացումից և գործադուլությունից սղտադործել իր գասակարգային շահերի համար:

1919 թվականի ազգային ազատագրական շարժումը դանդում էր բուրժուազիայի անվիճելի զեկավարությունից տակ: Բայց այդ դործին բուրժուազիայի հետ միասին մասնակցում է նաև չինական յերիտասարգ պրոլետարիատը: Շուտով նա շարժման սոսկ մասնակցից դառնում է նրա զեկավարման հավակնորդ, և 8 տարի շարունակ, մինչև 1927 թվի գարունը, Չինաստանի ազգային շարժման ներսը տեղի յե ունենում կատաղի պայքար հեղեմոնիայի համար՝ այդ յերկու գասակարգերի միջև, վորոնք հեղափոխություն միջոցով տրամադորեն հակառակ նպատակներին էյին ձգտում:

**ՉԻՆԱԿԱՆ ՊՐՈՒԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ**

Մեծ թիվ չկազմող չինական արդյունաբերական բանվորների առանձին յերույթներ ու գործադուլներ տեղի յեն ունեցել նաև մինչև 1919 թիվը,

բայց չինական պրոլետարիատը ձեռնորովեց վորպես դասակարգ միայն համաշխարհային պատերազմից հետո, յերբ առաջացան այնպիսի արդյունաբերական կենտրոններ, վորպիսիք են Շանհայը, Տյանձինը, Հոնկոնգը, Ուհանը և այլն: Արդյունաբերական պրոլետարիատի թիվն անցավ 2 միլիոնից, իսկ վոչ արդյունաբերականինը՝ հասավ մոտավորապես 10 միլիոնի: Պաշտպանելով չինական ազգային բուրժուազիային 1919 թվի հակաճապոնական շարժման մեջ, չինական բանվոր գասակարգն սկսեց համազգային յողունդների հետ միասին առաջադրել նաև իր գասակարգային անտեսական պահանջները: Գեո. ևս 1920 թվին Կանտոնում, Շանհայում և Հոնկոնգում տեղի յեն ունենում մի շարք անտեսական գործադուլներ, վորոնցով սկսվում է բանվորական շարժման պատմությունը Չինաստանում:

Չինաստանի բանվորական շարժման այս վերելքի հիմնական պատճառները մեկն էլ բանվոր գասակարգի գրություն մեկին վաստանալն էր, վոր վրա հասավ հետպատերազմյան լճացման և յերկրում շարունակվող անարխիայի հետևանքով: Չինական բանվորն սկսեց խաղմել (ԾՄԻՏՈՎԱԿԻ) այն անառնական պայմանների դեմ, վորոնց մեջ նրան դրել էյին. 12-ից 16-ժամյա բանվորական որ արդյունաբերական բանվորների համար, էլ ավելի յերկար բանոր՝ վոչ արդյունաբերական բանվորների համար, 5—10 դոլլար (չինական դոլլարը մի քիչ պակաս է ուրբույց) ամսական աշխատավարձ, կավե կամ ծղոտե զաղաղներ կամ մերկ հող՝ բնակարանի փոխարեն, 5—7 տարեկան հասակից սկսվող աշխատանք վերակացուի մտրակի հարվածների տակ, վաղաժամ մահ քրոնիկական քաղցի հետևանքով:

Չինական բանվորների գասակարգային գիտակցությունից արթնացմանը նպաստեց նաև մորիլիզացիայի յենթարկված և պատերազմ ուղարկված բանվորների վերադարձը Ֆրանսիայից, վորտեղից նրանք բերին արևմտա—յվրոպական բանվորական շարժման փորձը: Վերջապես մեծ նշանակություն ունեցավ և բանվորների շրջանում արմատական չին ուսանողությունից մղած պրոպագանդը, և մանավանդ, Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, վորի յուրը Չինաստան հասավ մեծ ուշացումով:

Գեո. ևս 1919 թվին սկսեցին մասսայաբար ծագել արհեստակցական միություններ, առաջին հերթին Կանտոնում, վորտեղ այդ պահին տեղական իշխանությունից դուրս էր կանգնած Սուն—Յաթ—Սենը, վորը համբերատար վերամուտք ուներ դեպի բանվորական կազմակերպությունները: 1920 թվի մայիսին Պեկինում, Շանհայում, Հոնանում, Կանտոնում սկսեցին ծագել կոմունիստական կուսակցությունից առաջին ըմբռները, իսկ 1921 թվի ոգոստոսին արդեն տեղի ունեցավ կուսակցությունից առաջին կոնֆերենցիան: Չինական կոմունիստական յուրեմն այդ պահին ներկայացնում էր ինտելիկտներին մի յամբակ, վորոնք բուրժուական լիբերալիզմից անցել էյին կոմունիզմի՝ ուստական հեղափոխությունից ազդեցություն: Սակայն այդ յամբակն ամսե ամիս ձեռք էր բերում ավելի ու ավելի մեծ ազդեցություն չին բանվորների վրա:

**ՀՈՆԿՈՆԳԻ ԾՈՎԱՅԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԳՈՒԼ 1922 ԹՎԻՆ**

Բնականաբար չինական պրոլետարիատն իր առաջին հարվածներն ուղղեց ոտարերկրացի կապիտալիստներին դեմ, վորովհետև հենց նրանք էյին չինա-

կան արդյունաբերության տեր ու տիրականները և հենց ոտարերկրացիներին ձեռնարկություններումն էր, վոր չին բանվորները յենթարկվում էին ամենամարդավայել շահագործման և դադանային վերաբերմունքի. այն բոլորն, ինչ վոր չինական ձեռնարկություններում մեղմացվում էր վորոչ նահապետականությունը և բանվորների ու ձեռնարկատերերի «ազդակցական» հարուբերություններով, այստեղ հրապարակ էր դալիս դաժանորեն մերկացված ձևով—բանվորների հետ վարվում էին, ինչպես անասունների հետ, լավագույն դեպքում՝ ինչպես ստորին ցեղի մարդկանց հետ, նրանց ձեռնում և յերբեմն էլ սպանում էին միանգամայն անպատիժ հերքով: Վոչ մի ոտարերկրացի ձեռնարկատեր չէր «ստորանա» մինչ այն ստախճանք, վոր խոսակցեր էր բանվորների հետ. խոսակցությունների և բանակցությունների միակ յեղանակը վրստիկանական մահակն էր:

1922 թվի հունվարի 12-ին չինական ծովայինները Հոնկոնգում\*) գործադուլ հայտարարեցին, պահանջելով աշխատավարձի հավելում: Անգլիական իշխանությունները խստությունների ճանապարհը բռնեցին գործադուլափորձերի նկատմամբ, բայց այդ ավելի յեր սրում պայքարը, նրան մասնակից տներով ավելի ու ավելի մեծ թվով բեռնողներ և նավահանգստի ոժանդակ բանվորներ: Փետրվարի 1-ին Հոնկոնգի անգլիական նահանգապետը ծովայիններին միությունը հայտարարեց որենքից դուրս: Դրանով իսկ անգլիական իշխանությունները տնտեսական գործադուլը փոխադրում էին քաղաքական ուղիների վրա: Վույժ բանվորական Հոնկոնգը պաշտպանեց գործադուլափոր ծովայիններին: Ի նշան համերաշխության՝ գործադուլ արին դադարի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների բանվորները, տնային ծառայողները, տրանսպորտային բանվորները: Գործադուլափորների թիվը բարձրացավ 150,000-ի: Այդ խոչորագույն կենտրոնի կյանքը կանգ առավ. անգլիական ձեռնարկությունները կրում էին միլիոնների հասնող վնասներ:

Չինական վոյժ պրոլետարիատը պաշտպանեց գործադուլափորներին: Գործադուլափորների ոգտին արվող նյութարարություններն առայում էլին Չինաստանի բոլոր ծայրերից և վոչ միայն բանվորներից, այլև ուսանողներից, մանր-բուրժուազիայից և նույնիսկ Չինաստանի հարավի խոչոր չին կապիտալիստների մի մասից, վորոնք չէին հրաժարվի սասանել իրենց անգլիացի մրցակիցների հզորությունը Հոնկոնգի բանվորների ձեռքով:

Մարտի 5-ին անգլիացիները նահանջեցին ամբողջ դժով, համաձայնելով ավելացնել աշխատավարձը և ճանաչել արհմիությունները: Հոնկոնգի բանվորների հաղթանակն ունեցավ հսկայական նշանակություն Չինաստանի ամբողջ հեղափոխական շարժման համար: Նա առաջ մղեց Չինաստանի բանվոր դասակարգին, իբրև իմպերիալիզմի դեմ ամենահետևողական պայքար մղողի, և զրկեց բուրժուազիային վոյժ ժողովրդի անունից խոսելու մենաշնորհայլ իրավունքից:

\*) Հոնկոնգը կանտոնից վոչ հեռու գտնվող մի կղզի յե, վոր մոտ 80 տարի առաջ գրավվել է անգլիացիներին կողմից: Ներկայումս դա խոչորագույն նահանգիստն է Խաղաղ ովկիանոսում: Հոնկոնգը համարյա ամբողջապես բրնակեցված է չինացիներով, բայց կղզին կառավարում է անգլիական զեռնարկ-նահանգապետը:

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1923 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ

Հոնկոնգի գործադուլից հետո գործադուլային շարժումը լայն ալիքով ծավալվեց ամբողջ յերկրում, վախեցնելով իմպերիալիստներին և Հյուսիսային Չինաստանի չինական բուրժուազիային, վորն ավելի սերա կերպով կազմված լինելով կոմպրոպոնություն և միլիտարիստների հետ, բանվորական շարժման առաջին իսկ քայլերից անհաշտ թշնամական դիրք բռնեց նրա նկատմամբ: 1922 թվի նոյեմբերին անգլիական և չինական զորամասերը զնդակահարեցին Տանչանի աժխահանքերի բանվորներին, իսկ 1923 թվի փետրվարի 7-ին անգլիական իմպերիալիստներին արբանյակ դեներալ Ու-Պեյ-Ֆուն կազմակերպեց Պեկին-Հանկուո յերկաթուղագծի գործադուլափոր յերկաթուղայինների մասսայական կոտորած, զնդակահարեց Հանկուոյի արհմիությունական գործիչներին և վաղից բոլոր արհեստակցական կազմակերպությունները կենտրոնական Չինաստանում: Ամբողջ Չինաստանում, բացառությամբ Կանտոնի, վորտեղ այդ միջոցին վերստին հաստատվել էր Սուն-Յաթ-Սենի իշխանությունը, բանվորական շարժումն յերկու տարով արյունաքամ արվեց և բանվորական կազմակերպությունները հարածվեցին ու անցան խորն ընդհատակյա գոյություն:

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԳՈՄԻՆԴԱՆԻ ՀԵՏ

Սուն-Յաթ-Սենն ու նրա կողմնակիցները—չինական մանր-բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի ամենաառաջավոր ներկայացուցիչները,—վոր համախմբվել էլին Գոմինդանի կուսակցության չուրջը, անհաջողություն կրելով իրենց բազմաթիվ փորձերի մեջ՝ հենվելու այս կամ այն միլիտարիստի, այս կամ այն ոտար պետություն վրա, յուրացրին նոր ընթացք: Սուն-Յաթ-Սենն սկսեց թեքվել դեպի ՍՍՀՄ: Նա վորոչեց Գոմինդանը դավադիրներին մի իմբակից վերածել ներքին կարգապահությունը միաձուլված մի կուսակցության, դաշինք կնքեց կոմունիստների հետ, կազմակերպվելու լիակատար ազատություն տալով բանվորներին և գյուղացիներին: 1924 թվի սկզբին սեղի ունեցավ Գոմինդանի առաջին համագումարը, վորն անցավ այդ նոր ընթացքի նշանաբանի ներքո:

Գոմինդանի դեպի ձախ թեքվելը մի կողմից և բանվորական շարժման աճումը մյուս կողմից չէին կարող շառաջացնել դասակարգային ուժերի շերտավորում նաև Հարավային Չինաստանում: Գոմինդանի ամենաաջ տարրերը, վորոնք մոտիկ էլին կոմպրոպոնների հետ, հեռացան Գոմինդանից՝ դժգոհ Սուն-Յաթ-Սենի քաղաքականությունից: Կանտոնի բուրժուազիայի աջ թևը անց, 1924 թվի աշնանը, կոմպրոպոնները փորձեցին զինված ուժով տապալել մանր, վոր պետք է կատարեր անգլիական իմպերիալիստների աջակցությունը: Կառավարությունը աջակցություն հաղթանակով պատված Շեմինի (ոտարերկրացիների կոնցեսիա կանտոնում) գործադուլից կարճ ժամանակ անց, 1924 թվի աշնանը, կոմպրոպոնները փորձեցին զինված ուժով տապալել Սուն-Յաթ-Սենի կառավարությունը, նրա դեմ հանելով այսպես կոչված «Թղթե վաղրերին»—առևտրական սպիտակ գվարդիան: Չնայած այն բանին, վոր Մակդոնալդի կառավարությունը կողմից Սուն-Յաթ-Սենին տրված ամե-

նալրբենի ու լուծատուներ կողմնակի կերպով պաշտպանեց արտամարտիկները, վերջինս այնուամենայնիվ ճնշվեց բանվորների աջակցութեամբ:

Կանտոնը շարունակում էր մնալ հեղափոխական շարժման բունը Չինաստանում, իսկ կոմունիստների Գոմինդան մտնելը հնարավորութեան տվեց նրանց սկսելու Գուանդունի նահանգի բանվորների և գյուղացիների կազմակերպման և մարտական դաստիարակութեան ամենալայն աշխատանք:

**ՉԻՆԱԿԱՆ ԲՈՒՐՇՈՒՍՉԻՍՏԻ ՆՈՐ ՅԵՂՈՒՅԹԸ—ՖԻՆ ՅՈՒՍՅԱՆԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ**

Չինական արդյունաբերութեան ապրած ճգնաժամը առանձին սրութեան հասավ 1923—24 թվերին: Վոչ միայն դադարեց նոր գործարանների ու ձեռնարկութունների կառուցումը, այլ և հները վոչ լրիվ բեռնավորութեամբ էլին աշխատում: այնպիսիներն էլ կային, վոր հարկադրված էլին փակվել: Մեքենաների ներմուծումը կրճատվեց յերեք անգամով: Յերկրի ամբողջ տնտեսական կյանքը յենթարկվում էր միլիտարիստների միջև մղվող պատերազմի քմահաճույքներին: Ազգայնական չինական բուրժուազիան վերստին փորձեց իր վրա վերցնել Չինաստանի միավորման, իմպերիալիստական ստրկութեան և միլիտարիստների կամայականութեան նրան ազատագրելու նախաձեռնութեանը: Հարավում այս բանն իր արտահայտութեանը գտավ Սուն-Յան-Սենի նոր ընթացքի մեջ, — Սուն-Յաթ-Սենի, վոր իր կողմն ունեւ բուրժուազիայի ձախ թեւ աջակցութեանը: Հյուսիսում իրեն չինական արդյունաբերական բուրժուազիայի արամադրութեանների արտահայտիչ հանդես յեկավ զենեթալ Ֆին-Յու-Սյանը, վորը, 1924 թվի վերջում դավաճանելով իր պետ Ու-Պեյ-Փույին, գրավեց իշխանութեանը Պեկինում և ստեղծեց այսպես կոչված ժողովրդական բանակները: Ֆին-Յու-Սյանն սկսեց սիրաշահել արժատական ուսանողութեանը և բանվորութեանն սկսեց Սուն-Յաթ-Սենի ուրինակով թեքվել զեպի ՍՍՀՄ: Այս հանգամանքը ազգային և բանվորական շարժման մեջ նոր աշխուժութեան առաջ բերեց Հյուսիսային Չինաստանում: Սակայն դա բոլորովին նսեմացավ պրոլետարիատի նոր յեւույթի առջև, վոր տեղի ունեցավ 1925 թվի մայիսի 30-ի Շանհայի անցքերից հետո: այդ նոր յեւույթը Շանհայի և Հոնկոնգի բանվորների հակայական գործադուլներն էլին, վորոնք ցնցեցին վողջ աշխարհը:

**1925 ԹՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒՄԸ ԵՄԵՀԱՅՈՒՄ**

Մայիսի 15-ին Շանհայում մի ճապոնական Փարբիկայում ճապոնական փոստիկանի ձեռքով զաղանարար սպանվեց մի չինացի բանվոր: Վրդովված բանվորներ ու ուսանողները կազմակերպեցին միտինգներ և բողոքի ցույցեր: Այդպիսի մի ցույցի վրա Նանկին-ոտղում (Նանկինյան փողոց), ոտարերկրացիների թաղում, անգլիական փոստիկանութեանը կրակ բացեց: Տասնյակ խաղաղ ցուցարարներ սպանվեցին ու ծանր վիրավորվեցին: Բանվորները դրան պատասխանեցին ընդհանուր գործադուլով, վոր հայտարարվեց հունիսի 1-ից Շանհայի բոլոր ոտարերկրյա ձեռնարկութեաններում: Գործադուլն առաջին իսկ շաբթին ընդգրկեց ավելի քան 200.000 բանվոր: Աշխարհիս այդ յերկրորդ նավահանգստի կյանքը կանգ առավ, վորովհետև բանվորների ու

բինակին հետևելով, գործադուլ արին նաև չինացի առևտրականներն ու արհեստավորները: Գործադուլի ղեկավարութեանը գտնվում էր բանվորները, առևտրականների և ուսանողների միացյալ կոմիտեյի ձեռքին, սակայն գործադուլի իսկական ղեկավարն արհմիութեանների Շանհայի խորհուրդն էր, վորը գտնվում էր չինական կոմունիստական կուսակցութեան անրաժանելի քաղաքական ազդեցութեան ներքո: Շանհայի բուրժուազիայի աջ թեք—կոմպրադորները—աշխատում էր ամեկ կերպ վիժեցնել գործադուլը, իսկ ձախ թեք, այսպես կոչված ազգային բուրժուազիան, ուղում էր մղել գործադուլը զեպի կոմպրոմիս իմպերիալիզմի հետ: Մինչդեռ բանվորներն առաջադրել էլին 17 պահանջ, վորտեղ քաղաքական բնույթի պահանջների կողքին, վորոնց նպատակն էր վերացնել իմպերիալիստական ճնշումը, կային նաև զուտ բանվորական պահանջներ՝ կազմակերպվելու և գործադուլների ազատութեան, վարվեցողութեան լավացում զեպի բանվորները, աշխատանքի պաշտպանութեան հաստատում, — չինական առևտրական պարտոն առաջադրեց պահանջների իր հատուկ պլատֆորմը, վորտեղ միանգամայն անտեպիլ էլին բանվորները շահերը:

Հունիսի 25-ին առևտրական գործադուլը դադարեց: Իմպերիալիստները շարունակում էլին հուպ տալ չինական բուրժուազիային, հարկադրելով նրան գործադուլի լիկվիդացիայի ուղիներ փնտոել: Գործի գրվեցին բոլոր միջոցները, սկսած կեղծ բանվորական միութեաններ կազմակերպելուց մինչև բանվորային հարձակումը արհմիութեանների խորհրդի վրա: Բայց բանվորները ամուր էլին մնում իրենց դիրքերում և միայն սեպտեմբերի սկզբին, ավելի քան 3 ամիս տևող գործադուլից հետո, վերսկսեցին աշխատանքը, ձեռք բերելով վորոշ անտեսական զիջումներ:

Մայիսի 30-ի անցքերը և Շանհայի ընդհանուր գործադուլը ջերմ արձագանք գտան ամբողջ Չինաստանում: Համերաշխութեան գործադուլներ տեղի ունեցան Հանկոտյում, Տյանձինում, Պեկինում, Յինդաոյում, Կաֆինում, Մուկդենում: Չինական պրոլետարիատն աճեց և դարձավ չին ժողովրդի առաջնորդը՝ իմպերիալիզմի դեմ մղած նրա պայքարում, ուսանողութեանը, վոր մինչ այդ առաջամարտիկ էր հանդիսանում չինական հեղափոխական շարժման մեջ, ստանձնում է այլևս յենթակայական դերեր: Բայց Շանհայի գործադուլից ավելի սուր կերպով դրեց այն դերի հարցը, վոր խաղալու յե չինական ազգային հեղափոխութեան մեջ պրոլետարիատը, 1925—26 թվերի Հոնկոնգ-Կանտոնյան գործադուլը, վոր Շանհայի անցքերի անմիջական շարունակութեանը հանդիսացավ:

**1925 ԹՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒՄԸ ՀՈՆԿՈՆԳՈՒՄ**

Հոնկոնգի ծովայինները հունիսի 19-ին գործադուլ հայտարարեցին՝ ի նշան համերաշխութեան Շանհայի բանվորների նկատմամբ: Հունիսի 23-ին անգլո-ֆրանսական զորքերը կրակ բացին չինացիների խաղաղ ցույցի վրա Կանտոնում, Շամինի մոտ, սպանելով ավելի քան 50 հոգի: Այն ժամանակ գործադուլն ընդգրկեց վողջ Հոնկոնգը, 200.000 չինական բանվոր թողեց Հոնկոնգը և փոխադրվեց Կանտոն, այնուհետև մասամբ տարածվելով չրջապա գյուղերում: Գործադուլ արին նաև Շամինի բանվորները: Հոնկոնգին և Շամինին բոլորո հայտարարվեց: Անգլիական դրոշ ունեցող վոչ մի նավ չէր

Թողնվում Կանտոնի նավահանգիստ: Այդ բավական չէր, վոչ մի ստարերկրյա նավ, յեթե կամենում եր առևտուր անել Կանտոնի հետ, իրավունք չունեի Հոնկոնգ մասնել:

Գործադուլը ղեկավարելու համար ստեղծվել էր գործադուլային կոմիտե, վորը մի քանի հազար բանվորական պահակների ուղևորությամբ ղեկավարում էր անգլիական ապրանքների բոյկոտը: Այդ ապրանքների մաքսանկող վաճառքի ղեկավարում ապրանքը դրավվում էր, իսկ հանցավորները դատի էլին արվում: Վոչ մի չինացի իրավունք չունեի Հոնկոնգ մեկնել առանց գործադուլային կոմիտեյի հատուկ թույլտվության:

Ունենալով իր սեփական ղեկավար ուժը, իր դատարանը, իր բանտերը՝ բոյկոտ խախտող հակահեղափոխականները և շտրայկերիսերները համար, գործադուլային կոմիտեն դառնում էր մի յուրատեսակ պետություն՝ պետութային մեջ: Յեւ յեթե առաջին շրջանում տարածայնություններ նրա և գոմինդանական իշխանություն միջև չէին լինում, վորովհետև անգլիացիները դեմ ուղղված գործադուլն ամենալայն համակրություն առաջացրեց Կանտոնի կիսաարհեստավորական պրոլետարիատի և մանր-բուրժուազիայի շարքերում, հետագայում Կանտոնն այնուամենայնիվ չկարողացավ խուսափել դասակարգային սուր պայքարից: Ազատամիտ բուրժուազիան դժգոհ Հոնկոնգի պրոլետարիատի հեղեմնական դերից, աշխատում էր ամեն կերպ հետ մղել նրան դեպի յերկրորդ սլան և իր ձեռքն առնել ազգային շարժման ղեկավարությունը: Գործադուլն արդեն սկսում էր շոշափել նրա սեփական շահերը: Կանտոնի բանվորները, վոզեորված Ծանհայի և Հոնկոնգի իրենց յեղբայրներին որինակով, սկսեցին առաջադրել աշխատանքի պայմանների բարելավման, աշխատավարձի ավելացման և բանվորական ժամերի կրճատման պահանջներ: Ինչպես խոշոր բուրժուազիան, այնպես էլ մանր և միջակ տնտեսուները առևտրական և արհեստային ձեռնարկության սերերը խիստ մեծ չափով առեկեցին Անգլիայի հետ տնտեսական հարաբերությունները խզելու հետևանքով, վորովհետև նրանցից շատերն իրենց հումուլթը (փայտեղեն, փղոսկր և այլն) ստանում էին անգլիական գաղութներից և իրենց ապրանքները վաճառում էին անգլիացիներին, գյուղական կուլակներն ևս, վորոնք մինչ այդ գյուղատնտեսական ապրանքներ էլին ներածում Հոնկոնգ, նույնպես դժգոհ էին գործադուլից:

ՄԱՐՏԻ 20-Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Գործադուլի հետ միասին, բուրժուազիայի նշանակելի մասին անհանգրստություն էր պատճառում գյուղացիական շարժման աճումը, վորը, սկսվելով 1924 թվին Գուանդունի նահանգում, Հոնկոնգի գործադուլի շրջանում արդեն այնպիսի լուրջ գործոն էր դարձել, վոր սպառնում էր կարվաճառներին, վաշխառուներին, ջնտրիներին (չինական յուրահատուկ ազնվականություն) և կուլակներին տիրապետությունը գյուղում (պետք է սասել, վոր այդ ժամանակ գյուղացիության պահանջները տակավին համեստ էլին, նա պահանջում էր իջեցնել հողի վարձակալության դիրը և ստեղծել գյուղում անկաշար իշխանություն):

Թեև վորված աջակողմի աջակցությամբ և մանր բուրժուազիայի շրջանում յերևան յեկած ռեակցիոն տրամադրություններով, չինական ազատու-

ձիա բուրժուազիան, ի դեմս Գոմինդանի իր ներկայացուցիչ Չան-կայ Շիի, կատարեց այսպես կոչված 1926 թվի մարտի 20-ի հեղաշրջումը:

Այս հեղաշրջումը, վորը շատերի կողմից—նրա արտաքին հատկանիշերը նկատի առնելով—գնահատվում էր իրրև հասարակ «միջադեպ», ունեցավ այն արդյունքը, վոր Գոմինդանի մանր-բուրժուական թևի ներկայացուցիչները, այսպես կոչված ձախ գոմինդանականները, վորոնք շարունակում էին Սուն-Յաթ-Սենի քաղաքականությունը (Սուն-Յաթ-Սենը մեռել էր 1925 թվի մարտին) Վան-Տին-Վեյի գլխավորությամբ, հեռացվեցին իշխանությունից և նրանց տեղը դրավեց Գոմինդանի ցենտրիստական խմբակը, վորն արտահայտում էր Գուանդունի նահանգի և Չինաստանի հարավ-արևելյան նահանգների ազատամիտ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շահերը: Գոմինդանի պարադուլի դարձավ ցենտրիստ գեներալ Չան-կայ-Շին: Կառավարություն արտաքին քաղաքականությունը կարծես թե շատ չփոխվեց, բայց կառավարությունն սկսեց խանդարել կոմկուսակցության, արհմիությունների և գյուղացիության հեղափոխական կազմակերպություններին աշխատանքը վերակենդանացան դեղին արհմիությունները՝ Գուանդունի Բանվորական Ֆեդերացիան և Մեխանիկներին Միությունը, հաճախացան արյունալից բնդհարումները նրանց անդամներին և կարմիր արհմիությունների անդամների միջև: Կարվածատերերը գյուղում ողավելով իշխանությունների չխանգարող վերաբերմունքից և յերբեմն էլ նրանց աջակցությունը վայելելով, սկսեցին ջարխախել գյուղացիական միությունները: Բուրժուազիան ձգտում էր, միայնաց դեմ ողտադործելով կոմունիստներին և ծայրահեղ աջ ռեակցիոններին, սանձահարել բանվորագյուղացիական շարժումը, իր ղեկավարության տակ առնել այն և ողտադործել այն վորպես գործիք՝ ավարտելու չինական ազգային հեղափոխությունն իր, բուրժուական ճանապարհով, Չինաստանի ռազմական միավորումով: Այս պատճառով մարտի 20-ի հեղաշրջման լուղունգն էր վոչ թե արչավ կոմունիստներին դեմ, այլ արչավ հյուսիսային միտարխիստների դեմ:

ՀՅՈՒՄԻՍՍՅՈՒՆ ԱՐՇԱՎԸ

Հյուսիսային արչավի ողևությունը չինական ազատամիտ բուրժուազիան հույս ունեի, մասսայական շարժումն ողտադործելով, ջարխախել հյուսիսային միլիտարիստներին, միացնել յերկիրը միասնական բուրժուական իշխանության ձեռքում, իրենց հպատակեցնել Ֆեդերացիային, ապա սակարկելով ձեռք բերել իմպերիալիստներից վորոշ արտոնություններ ու ազատություններ իր համար,—մե խոսքով տանել Չինաստանը քեմալիստական ճանապարհով: Բայց թե կոմունիստական կուսակցությունը և թե բանվորագյուղացիական կազմակերպությունները պաշտպանեցին հյուսիսային արչավը, վորովհետև նրանք այդ համարում էին հեղափոխական բազայի ընդարձակում, բանվորագյուղացիական շարժման ծավալման գորեղ միջոց: Յեթե կոմունիստներն այդ շրջանում հրաժարվելին պաշտպանել Հյուսիսային արչավը և դուրս գային Գոմինդանից, դրանով նրանք կդատապարտեին իրենց լայն մասսաներից մեկուսանալու վիճակի,—մասսաներ, վորոնք հրա-



պուրված էլին Հյուսիսային արշավի գաղափարով և տակավին շատ քիչ չափով էլին ընդգրկված կոմունիստական ազդեցութեամբ: Բայց վոր ամենազլխավորն է, կոմունիստների յեւրոյթը Գոմինդանի դեմ անկարելի կղարձներ բանվորագյուղացիական շարժման այն հսկայական վերելքը, վոր մենք ունեցանք 1926 թվի վերջին և 1927 թվի սկզբին Չինաստանում՝ Հյուսիսային արշավի հետեանքով:

Հյուսիսային արշավն սկսվեց 1926 թվի ամառը: Արդեն ողոստութիւն Հունան նահանգն անցավ Կանտոնի բանակի ձեռքը, իսկ սեպտեմբերի 7-ին դրավեց Հանկուոն: Ռազմական տեսակետից վերին աստիճանի մեծ սխալ ներկայացնող այս արշավը բերում էր հաղթանակ հաղթանակի հետեւից: Այս հաղթանակները գոմինդանական բանակը պարտական էր առաջին հերթին այն հերոսական աջակցութեամբ, վոր ցույց էլին տալիս նրան ամենուրեք բանվորներն ու գյուղացիները:

Հարավային գործերի գալով՝ բանվորական և գյուղացիական կազմակերպութեանները սունկերի պէս էլին բանում: Չորահարամանատարութեանը չէր համարձակվում արդէլք հանդիսանալ այդ ամձանը, քանի դեռ շարունակվում էլին ռազմական գործողութեանները: 3-4 ամսվա ընթացքում, 1927 թ. սկզբներին, Հուբեյ նահանգում արդեն կազմակերպված էլին արհմիութեաններում մոտ 300,000 բանվորներ և համարյա թէ նույնքան կազմակերպված բանվորներ էլ կային Հունանի նահանգում: Արհմիութեաններն իրենց հետ բերին նաև գործադուլային պայքար: Ամբողջ Կենտրոնական Չինաստանում բանվորները, ողտվելով նպաստավոր քաղաքացիական պայմաններից, կորցում էլին ձեռնարկատերերից զիջումներ աշխատավարձի, աշխատանքի ժամերի կրճատման, աշխատանքի պայմանների բարելավման ասպարիզում: Բանվորների պայքարն ամենից առաջ ուղղված էր ստար կապիտալի դեմ, բայց աստիճանաբար այդ շարքի մեջ էլին առնուվում նաև չինական ձեռնարկութեանները: Միմիայն Ուհանում<sup>1)</sup> 1926 թվի սեպտեմբերի կեսից մինչև դեկտեմբերի վերջը տեղի ունեցավ 160 գործադուլ 200,000 մասնակիցներով:

Ինչպէս ոտարերկրյա, նույնպէս և չինական բուրժուազիան ահազանգ հնչեցրին: Հեղափոխական շարժումը վերստին ճգնաժամի չըջան էր թեմակոխում: Արդեն 1926 թ. դեկտեմբերին Կանտոնում գոմինդանական գեներալները, ողտվելով այն հանգամանքից, վոր Գուանդունը դուրս է յեկել ռազմական գոտուց, հրապարակ յեկավ մի շարք հրամաններով, ուղղված բանվորական շարժման դեմ: Ստեղծվեց պարտազեր արբիտրաժ աշխատանքային կոնֆլիկտների համար, արգելվեց պայքարը շտրայկերի թիւթեմային դեմ, սկսվեցին նոր խտտութեաններ գյուղացիական շարժման դեմ: Ուհանում կառավարութեանը, բուրժուազիայի ճնշման տակ, նույնպէս բռնեց ստիպողական արբիտրաժի և բանվորական պահանջների թվի սահմանափակման ուղին:

<sup>1)</sup> Ուհանը յերեք քաղաքների՝ Հանկուոյի, Սանյանի և Ուչանի միութեանն է և խոշոր արդյունաբերական կենտրոն: Ունի 2 միլիոն բնակչութեան:

Չինական կոմկուսակցութեան ուղորտունիստ դեկավարները, յերկուզ կրելով ռեակցիայի այս նոր ալիքի ծավալվելուց, սկսեցին զիտակցարար գաղել բանվորների և գյուղացիների յեւրոյթները, վորպեսզի բուրժուազիային վերջնականապէս չլանեն հեղափոխութեանից: Ըիդ թափելով ամեն կերպ համոզել բուրժուազիային, վոր բանվոր դասակարգը և իր կուսակցութեանը բուրժուազիային են թողնելու աղաչյին հեղափոխութեան տեղութեան ընթացքում ամբողջական իշխանութեանը և չեն միջամտելու պետութեան կառավարելու գործին, կուսակցութեան դեկավարութեանը հրաժարվում էր մտնել իշխանութեան տեղական մարմինների և կենտրոնական իշխանութեան կազմի մեջ ու հրաժարվում էր կոմունիստական լայն աշխատանքից բանակում: Այս վարքադիժը հեշտացնում էր բանակի և պետական սպարափ նվաճումը բուրժուազիայի կողմից:

**ՊՐՈՒԼԵՏԱՐԻԱՏԻ ՆՈՐ ՅԵՆՈՒՅԹԸ—ԿՈՆՅԵՍԻԱՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ**

Ռեակցիան հակահարված ստացավ Հանկուոյի պրոլետարիատի կողմից, վորը 1927 թվի հունվարի 3-ին, դայրացած անգլիացիների լլիլը վարվեցողութեանից, ուժով դրավեց այդ քաղաքի անգլիական կոնցեսիան և վերադարձրեց այն Չինաստանին: Մի յերկու օրից հետո բանվորները դուրս մղեցին անգլիացիներին նաև Չյուձյանի (նավահանգիստ Հանկուոյի և Նանկինի միջև) կոնցեսիայից: Պրոլետարիատը նորից էր խլում նախաձեռնութեանը բուրժուազիայի ձեռքից՝ աղաչյին հեղափոխութեան մեջ: Կոնցեսիաների դրավումը մեկն էր ամենաձանր հարվածներից, վոր յերբեք հասցվել են Անգլիայի դադութեանի պրեստիժին, սակայն այդ նվաստացումը նա կուլ տվեց, վորովհետև անգոր էր ձմեռը արշավանք գործելու Հանկուոյի վրա: Հանկուոյի պրոլետարիատի այս ակտը հեղափոխականացրեց վողջ իրադրութեանը: Կառավարութեանը և Գոմինդանի կենտկոմը, վորոնք այդ միջոցին Կանտոնից Ուհան էլին փոխադրվել, հարկադրված յեղան մասսաների ճնշման տակ յուրացնել ձախ ընթացք: 1927 թվի մարտին Գոմինդանի կենտկոմի պլենումում ձախերը, կոմունիստների հետ դաշնակցելով, հաղթեցին աջակողմյաններին ու ցենտրիստներին, կրճատվեցին Չան-Կայ-Շիի, իրբև գլխավոր զորահրամանատարի և Գոմինդանի պարագլխի, իրավունքները և կոմունիստները մտան կառավարութեան մեջ, ստանալով աշխատանքի և հողազորութեան միխտրութեանները:

Այդ միջոցին դասակարգային ներհակութեանները շարունակում էլին սրվել: Բանվորների հետ միասին, պայքարի յեր յելնում նաև Հարավային Չինաստանի գյուղացիութեանը: Հունանում, Հուբեյում, Գուանդունում գյուղացիները, արդեն չրավականանալով հողի վարձագնի նվազեցման պահանջով, կազմակերպել էլին ինքնապաշտպանութեան իրենց ջոկատները, ձերբակալում և դատում էլին հակահեղափոխական կալվածատերերին, պահանջում էլին բաժանել կալվածատիրական հողերը: Կալվածատերերը և բուրժուազիան սկսեցին ուժեղ թափով զինվել հեղափոխութեան դեմ: Գոմինդանի աջ կալվածատիրական-կոմպրազորական թեք դրդում էր նրա աղաչյին-բուրժուական, ցենտրիստական թեքին՝ ավելի վճռական պայքար մղել սպտոնացող բանվորական և գյուղացիական շարժման ու կոմկուսակ-

ցութեան անձանց դեմ: Մինչև 1927 թվի հունվարը գերակշռութեանը Գոմինդանում և կառավարութեան մեջ ցենսորիստների կողմն էր: Իսկ հունվարից հետո գերակշռութեանն անցավ ձախ գոմինդանականներին, մանրբութեական հեղափոխականներին, վորոնց աջակցեցին կոմունիստները: Այս բանը մղում էր Գոմինդանի աջ խմբակներին սուր կոնֆլիկտի մեջ մտնելու Ռեհանի կառավարութեան հետ, վորին նրանք փաստորեն հրաժարվում էին ճանաչել:

**ՊԱՅԻՄԱՐ ԵՍՆ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ**

Քաղաքական պարտութեան կրելով Ռեհանում, հարավային բանակի բութեական ղեկավարները Չան-Կայ-Շիի գլխավորութեամբ նախապես գրեցին ռազմական սեփական, վերջինս Եանհայն ու Նանկինը: հայտարարել Հարավային Չինաստանի մայրաքաղաքը Նանկին փոխադրված և աշխատելից, իմպերիալիստների գազանի աջակցութեամբ, կողմադրվել Ռեհանի կառավարութեանը ու սանձահարել բանվորագյուղացիական շարժումը:

Արդեն փետրվարի կեսին հարավային զորամասերն այնքան էլին մտտեցել Եանհային, վոր Եանհայի բանվորներն ընդհանուր քաղաքական գործադուլ հայտարարեցին, վորը տեղի փետրվարի 19-ից մինչև 25-ը: Բայց այդ գործադուլն, ինչպես և դրան հետևող զինված ապստամբութեանը, ճնշվեց հյուսիսային ղեներալների կողմից: Միայն մարտի 21-22-ին կանտոնականները ձեռք բերած նոր հաջողութեանները Եանհայի ճակատում հնարավոր դարձրին բանվորների համար բարձրացնելու նոր հաղթական ապստամբութեան, և գրավելու քաղաքի շինական մասի բոլոր թաղերը: Չանհայ մտնելով, աջ գոմինդանական ղեներալները տեսան, վոր քաղաքն ապստամբված պրոլետարիատի ձեռքին է: Այստեղ ևս բանվոր գասակարգը: խլում էր բութեական ձեռքից նախաձեռնութեանը՝ միլիտարիստական սեակցիայի դեմ մղվող պայքարում:

Քաղաքում ստեղծվեց յերկիշխանութեան մի կողմը կանգնած էլին զինվորականները, վորոնք արդեն բացահայտ կերպով դուրս էլին յեկել Ռեհանի կառավարութեան և կոմունիստների դեմ, իսկ մյուս կողմը՝ ժողովրդական պատգամավորների ժողովի ընտրած կառավարութեանը, վորին աջակցում էլին բանվորները, սևամտները և մանր բութեական, և վորին ճանաչել էր Ռեհանի կառավարութեանը: Սակայն, չնայած դրան, պրալետարիատի համար քանի զնում, այնքան ավելի աննպատակ դարձրութեան էր ստեղծվում: Կոմկուսակցութեան ղեկավարութեանը, չկամենալով «կոպել» բութեականի հետ, անգործութեան մասնեց կառավարութեանը: մտտիկ շրջանների գյուղացիութեանը վտարի չհանվեց պաշտպանելու պրոլետարիատին: բանակի նյամման և բանվորների զինման աշխատանքը շատ թույլ էր: Մինչդեռ աջերն իրենց բոլոր ուժերը կենտրոնացնում էլին Եանհայի շրջանում: Իմպերիալիստները շտապեցնում էլին նրանց դուրս գալու հեղափոխութեան դեմ: Մարտի 24-ին ոտարերկրյա ռազմանավերը ուժեղացնել Նանկինը, հասկացնել տալով շինական բութե-

719  
803H  
39

ժուղիային, վոր նա պետք է ծունկ խոնարհի կամ բանվորների ու գյուղացիների առաջ, կամ ոտարերկրյա կապիտալի առաջ: Բութեական, իհարկե, գերադասեց վերջինը:

**ԱՊՐԻԼԻ 12-Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ**

Արդեն մարտի վերջին Գոմինդանի աջ և ցենսորիստական գործիչներն ամեն կողմից Եանհայ յեկան խորհրդակցութեան, վորտեղ մշակեցին Չինաստանի ամբողջ հարավ-արևելքում զինվորական հեղաշրջում կատարելու, բանվորական և գյուղացիական շարժումը Չանհայից, կոմունիստների և Ռեհանի կառավարութեան հետ կապերը խզելու ծրագիրը: Այդ ծրագիրն առաջավ իմպերիալիստների սանկցիան և համապատասխան: Ապրիլի 6-ին տեղի ունեցավ անգլիացիների նախապատրաստած հարձակումը ՍՄՀՄ լիազոր ներկայացուցչութեան վրա Պեկինում, ապրիլի 7-ին անգլիական վոստիկանութեանը Եանհայում շրջապատեց խորհրդային հյուպատոսութեան շենքը, իսկ ապրիլի 12-ի դեռերը Չան-Կայ-Շիի գործերը, շինական բութեականի կողմակերպած Փաշիստական ջոկատների ոգնութեամբ, սկսեցին զինաթափել Եանհայի բանվորական գվարդիան: Չնայած ցույց տրված հերոսական զինադրութեան, բանվորական ջոկատները զինաթափ արվեցին, հարյուրավոր լավազույն բանվորներ զնդակահարվեցին և մահապատիժ ստացան: Ապրիլի 13-ին գործերը կրակ բացին խաղաղ ցույցի վրա, կոտորելով հարյուրավոր կին ու յերեխա: Սկսվեց կոմունիստների և արձմիթյունների ակտիվ անդամների իսկական վորոք, ընդ վորում բրոնավածներին յենթարկում էլին աներևակայելի տանջանքների և սպանում ելին: Կարմիր արձմիթյուններն որենքից դուրս հայտարարվեցին, և աջ Գոմինդանը նրա տեղը դրեց իր սեակցիոն կողմակերպութեանները՝ զինվորական ավանտյուրիստների, լուսպեն պրոլետարների և խուլիգանների գլխավորութեամբ:

Եանհայում տեղի ունեցած հեղաշրջման հետ միաժամանակ, արշավանք սկսվեց կոմունիստների դեմ Չյանսույի, Չե-Չյանի և Փու-Չյանի նահանգների բոլոր քաղաքներում: Վերջապես ապրիլի 15-ին հեղաշրջում տեղի ունեցավ Կանտոնում, վորտեղ ղեներալ Լի-Տի-Մինը, հենվելով Գուանդունի սեակցիոն Բանվորական Ֆեդերացիայի և Մեխանիկների Ֆիլիթեանի աջակցութեան վրա, Չանհայից և հարկադրեց ընդհատակյա գոյութեան անցնելու բոլոր հեղափոխական կողմակերպութեաններին:

Ամենուրեք գոմինդանական սեակցիան հրապարակ էր դալիս «հեղափոխութեանը կոմունիստներից պաշտպանելու» դրոշի տակ: Ռեակցիոն ղեներալները, հուսալով հիմարացնել ու խարել մասսաներին, աշխատում էլին ներկայացնել կոմունիստներին իրրե շինական և համաշխարհային հեղափոխութեան թշնամիների, հակահեղափոխականների, բանվորների և գյուղացիների ճնշողների, անգլիական իմպերիալիզմի... գազանի սպաստվորների և այլն: Աշխատավորների ամենամոտակից խավերի շարքերում այս ամենը առաջ բերեց վորոշ ժամանակավոր շփոթութեան:

Ինչն էր պատճառը, վոր սեակցիան այդքան հեշտ կարողացավ նվաճել Եանհայն ու Կանտոնը:



Նախ և սուսալ այստեղ կային մի շարք որչեղարի կարգի պատճառներ. աջ Գոմինդանը գրավել էր Չինաստանի հարավ-արևելյան նահանգները, վորտեղ հասկապես բավական ուժեղ և զարգացած բուրժուազիան, ունի իր յերկարամյա արազիցիաները, փորձված և քաղաքական պայքարում, մինչդեռ բանվորական և գյուղացիական կազմակերպությունները (բացառությամբ Գուանդունի և Շանհայ քաղաքի) ղեկուս նոր էլին սկսում զարգանալ, — Շանհայում Չան-Կայ-Շին իր թիկունքում ունի իմպերիալիստները 30,000-անոց բանակը, — Գուանդունում յերկարատև անուսական ճգնաժամը և դործադրությունը թուլացրել էլին բանվորների ու գյուղացիների ղեկավարությունը: Սակայն, 1927 թվի ապրիլի էր պարտությունը Չինաստանը պակաս չափով պարտական չէ նաև այն խոշոր սխալությունը Չինաստանը պակաս չափով պարտական չէ նաև այն խոշոր սխալություններին, վոր գործել է չինական կոմունիստական կուսակցության այն ժամանակվա ղեկավարությունը, վորը հետ էր մնում անցքերից, չէր հասկանում, վոր բուրժուազիայի հետ դաշնակցելուց արդեն հարկավոր է անցնել նրա դեմ պայքարելուն, չէր կատարում համարյա վոչ մի աշխատանք նախապատրաստելու մասսայական հակահարված՝ գոմինդանական ղեկավարության հակահեղափոխական ծրագրերին և քաջ էր դալիս բուրժուազիայի պոչից, տակալին հուսալով պահել նրան հեղափոխական բրկի շարքերում:

**ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ**

1927 թվի ապրիլի կիսին ալ գոմինդանականներն, ի հակազին Ռուսների կառավարության, ստեղծեցին նոր աղբյուր կառավարություն Նանկինում: Չինաստանում հեղափոխության միակ բովեր մնացին Ռուսների կառավարության յենթակա Հուբեյ, Հունան, Հենան և Չյանսի նահանգները:

Ռուսների կառավարությունը, վորի գլուխ էր կանգնած մանր-բուրժուական հեղափոխական Վան-Տին-Վեյը, դուս մանր-բուրժուական կառավարություն չէր: Նրա ձախ թեւում կոմունիստներն էլին նստած, իսկ ալ թեւում կիսաֆեոդալ ղեկավարները, ինչպես որինակ Տան-Շին-Չիին: Ռուսների կառավարությունը, վորին քայքայում էլին ներքին հակասությունները, անզոր գտնվեց կանխելու Չան-Կայ-Շիի յերթացումը: Յերբ աջակողմյան հեղաշրջումը հարավ-արևելքում կատարված փաստ դարձավ, Ռուսներ նոր սկսեց պատրաստվել արշավելու Չան-Կայ-Շիի վրա, սակայն այս արշավն էլ չիրագործվեց:

Մինչդեռ դասակարգային պայքարը դնալով ավելի ու ավելի յեր սըրվում և՛ գյուղում, և՛ քաղաքում: Գյուղացիները, մանավանդ Հունանի նահանգում, սկսել էլին արդեն գրավել կարվածատերերի հողերը, քաղաքները ողակված էլին իմպերիալիստներին և չինական բուրժուազիայի կողմից, ձեռնարկատերերը փակում էլին իրենց ֆարքիկաներն ու գործարանները, սպեկուլյանտները փքում էլին ապրանքների գները, — այս բոլորը գրգռում էր բանվորներին պահանջելու կառավարությունից, վորպեսզի չինական բուրժուազիայի դեմ ձեռք առնի պայքարի, խիստ միջոցներ: Պատին սեղմված ձախ Գոմինդանը, փախենալով հեռացնել իր ալ դաշնակցներին, ճիգ էր թափում գնալու բանվորաղյուղացիական շարժումը, համաձայնում էր գրավել միայն հակահեղափոխականներին հողերը, հորդո-

րում էր քաղցած բանվորներին չքայքայելու բուրժուազիային, շտապադրել մեծ պահանջներ, կրճատել բանվորական գվարդիան և այլն:

Մասսաների ուշադրությունը ազդարարյին հարցի լուծումից և արդյունաբերությունը բանվորական վերահսկողություն յենթարկելու հարցից հեռացնելու նպատակով, — հարցեր, վոր հեղափոխությունն էր դրել որակարգի մեջ, — Ռուսների կառավարությունը սուսալ մղեց նոր Հյուսիսային արշավ կազմակերպելու լողունը, վորի նպատակը պետք է լիներ գրավել Պեկինը: Իսկ կոմկուսակցության ղեկավարությունը, փոխանակ ներքին պրոբլեմների անմիջական լուծում պահանջելու, պաշտպանեց այդ լողունը, ընդ վորում կենտկոմի քարտուղար Չեն-Գու-Սյուն հրապարակ յեկավ ու պորտունիստական ֆորմուլայով՝ «նախ ծավալենք հեղափոխությունը, ապա նոր խորացնենք»:

Առաջին հակահեղափոխական պոթիումները Ռուսներն յենթակա նահանգներում — ղեկերալներ Յան-Սենի և Սյա-Դու-Ինի ապստամբությունները — լիկվիդացիայի յենթարկվեցին կոմունիստական և ձախ գոմինդանական ղորամասերի ուժերով: Բայց յերբ 1927 թ. մայիսի 21-ին Ռուսների ղեկավարների աջակցության վրա հենված հակահեղափոխականները գլուխ բարձրացրին Հունանի մայրաքաղաք Չանչայում, կազմակերպելով կոմկուսակցության, ձախ Գոմինդանի, բանվորական և գյուղացիական միությունների անդամներին ջարդ, Ռուսների կառավարությունը արդեն այնքան էր թուլացել ներքին կովից, վոր չկարողացավ ակտիվ միջամտել այդ շարժմանը — նրա մանր-բուրժուական ղեկավարները չհամարձակվեցին դուրս գալ ալ ղեկերալների դեմ: Մի յերկու շաբաթ էլ վոր անցավ, Ռուսների գործերի գլխավոր հրամանատար ղեկերալ Ֆին-Յու-Սյանը համաձայնության յեկավ Չան-Կայ-Շիի հետ և աղբյուրով Հունանի հետ միասին Ռուսների կառավարության աղղեցություն տակից դուրս յեկավ նաև Հենանի նահանգը:

Վորքան շատ էր լիտինում հակահեղափոխությունը, այնքան ավելի վճռական էլին հարձակվում բանվորաղյուղացիական շարժման «յերեսայական հիվանդություն» դեմ ձախ գոմինդանականները: Այս միջոցին Ռուսներում բացվեց արճիությունների համաչինական IV համադումարը: Համադումարը բունեց դասակարգային ճիշտ գիծ, պահանջելով վճռական պայքար հակահեղափոխության դեմ: Բայց արդեն համադումարի փակման որը, հունիսի 29-ին, սեպտեմբերի դուրս բարձրացրեց նաև Ռուսներում:

Չորքերը գրավեցին արճիությունների շենքերը, բանվորական գվարդիան ղինաթափ արվեց՝ չինական կոմկուսակցության այն ժամանակվա կենտկոմի ղեկավարների համաձայնությամբ, վորոնք շարունակում էլին անվերջ ղիջումների և նահանջի քաղաքականությունը:

Բայց կոմինտերնի և բանվորական ղանդվածներին ճնշման տակ, վորոնք դժգոհ էլին բուրժուազիայի հանդեպ կապիտուլյացիայի, դործադուրներ ղարգելման, բանվորական կազմակերպությունների գործնություն կամովին սահմանափակման և այլ սույնանման ձեռնարկումներից, — կոմկուսակցության կենտկոմը այնուամենայնիվ հրապարակ յեկավ իր բողոքով ընդդեմ կառավարության այդորինակ վարմունքի, և վերջինի կազմից դուրս յեկան յերկու կոմունիստ միլիտարները:

Չախ Գոմինդանի անցնելը սեակցիայի կողմը դարձավ կատարված փաստ: Սկզբեցին բանվորական կազմակերպութունների և կոմկուսակցության հալածանքները Ուհանում և վերջապես 1927 թ. հուլիսի 29-ին Ուհանի կառավարութան բանակը կրակ բացեց դործազուրկ ուղիղների խողով ցույցի վրա (ուղիղները առևտրական պալատից նպաստ էլին պահանջում): Ծանհայի, Կանտոնի, Չանչայի և այլ շրջանների պես, կոմունիստների և նրանց համակրողների մասսայական կոտորած սկսվեց նաև Ուհանում:

**Յե-Տինի Յեվ Հո-Լուին ԱՐՇԱՎԸ ԳՈՒԱՆԴՈՒՆԻ ՎՐԱ**

Ոգոստոսի 1-ին Չյանսիի մայրաքաղաք Նանչանում հին կանտոնական բանակի զորամասերը, վորոնք գտնվում էին կոմունիստների ուժեղ ազդեցության տակ, ապստամբվեցին Ուհանի կառավարության դեմ և շարժվեցին դեպի Գուանդուն, հուսալով ապստամբած գյուղացիության վրա հենվելով՝ ստեղծել հեղափոխության նոր կենտրոն այդ նահանգում:

Այդ արշավի ամբողջ տեղության ընթացքում, 1927 թ. ոգոստոսին և սեպտեմբերին բազմաթիվ իրարից անկախ գյուղացիական ապստամբություններ ու խաղժեր են բարձրացվում գոմինդանական իշխանության դեմ Գուանդունում, Հունանում, Հենանում և նույնիսկ Չյանսույում<sup>1)</sup>, վորտեղ սեակցիան թվում էր, թե շատ ուժեղ պետք է լինի: Բայց շարժումը ապրիլային էր, պարտիզանական բնույթի, առանց կենտրոնացված ղեկավարության, — վորը բացատրվում է իրարից հեռու գտնվող ապստամբ շրջանների միջև կապ հաստատելու բացառիկ դժվարությամբ:

Գյուղացիական ապստամբությունների ծավալման հետ միասին ու միաժամանակ՝ սկսում է ուշքի գալ իր նորերս կրած հարվածներից նաև բանվորական շարժումը: Ծանհայում, Կանտոնում, Ուհանում տեղի չեն ունենում մի շարք դործազուրկներ: Բանվորները մեծ հույսեր են դնում Նանչանի ապստամբների բանակի վրա, վորը գործում էր գեներալներ Յե-Տինի և Հո-Լուինի առաջնորդությամբ:

Այդ բանակը գրավեց Սվատոուն (խոչոր նախահանդիսա Գուանդունում) սեպտեմբերի 23-ին, սակայն չկարողացավ իր ձեռքին պահել այն, պարտվեց թշնամուց և ցրվի յեկավ: Նրա պարտությունը բացատրվում է ինչպես ծայր աստիճան անբարենպաստ պայմաններով, վորոնց մեջ նա գրվեց (յեկարատե, մաշող ճանապարհորդություն, միջոցների և ուղիքների բացակայություն), նույնպես և նրանով, վոր նա չկարողացավ ապստամբեցնել գյուղացիությունը. արշավի ղեկավարները չէին համարձակվում հոչ անել գյուղացիությանը գրավելու կալվածատերերի հողերը և բաժանելու իրենց միջև, աշխատում էին ձեռք չտալ մանր և միջակ կալվածատերերին, իսկ այդ բոլորի հետևանքն այն յեղավ, վոր Գուանդունում գյուղը պարտաճան ոգնություն ցույց չտվեց այդ բանակին:

<sup>1)</sup> Այս նահանգում են գտնվում Ծանհայ և Նանկին քաղաքները:

**ԳՈՄԻՆԴՈՒՆԻ ԲԱՅԲԱՅՈՒՄԸ**

Կոմունիստական կուսակցությունը շորս սարի շարունակ հանդիսացել էր այն միակ ուժը, վոր միացնում էր Գոմինդանը: Աջերի և ապա նաև ձախերի յերույթը կոմունիստների դեմ ունեցավ այն հետևանքը, վոր տեղի ունեցավ Գոմինդանի կատարյալ դադարարական և կազմակերպչական քայքայումը: Գոմինդանը, հետևապես նաև վողջ Հարավային և Կենտրոնական Չինաստանը, բաժանվեցին առանձին մասերի: Այսպես կոչված գուանսիական կոնկր (գեներալներ Լի Տի Սին, Բայ Չուն Սի, Լի Չուն Փեն), վոր հակված է դեպի խոչոր կալվածատերերը, կոմպրոպորները և անգլիական իմպերիալիստները, գրավել և Գուանդուն նահանգը, իսկ նույնիսկ Նաև Հուբեյը և Հունանը՝ այսպես կոչված Չե-Չյանի կլիկը (Չան-Կայ-Շի), վոր չինական ազգային բուրժուազիայի արտահայտիչն է, բուն և գրել Ծանհայում և հարավ-արևելյան նահանգներում. սա մասամբ սիրաշահում է ձապոնական, մասամբ էլ ամերիկական իմպերիալիզմին: Անխվեյ և Չյանսի նահանգները ընկել են միջանկյալ խմբավորումների ձեռք, Հենանը գտնվում է այդ խմբավորումներից անկախ Փին-Յու-Սյանի ձեռքին և այն: Չախ Գոմինդանականները, վորոնք ներկայացնում են բուրժուազիայի ամենաարժատական թեր և մանր-բուրժուազիայի վերնախավը (Վան-Տին-Վեյ, Չուն-Փա-Գույ) առանց տերրիտորիալ հենարանի յեն մնացել: Միայն 1927 թվի նույնիսկին Չան-Փա-Գույը փորձ արեց յալել Գուանդունը Լի-Տի-Սինի ձեռքից և գրավեց Կանտոնը:

Հակահեղափոխականների դեմ 1923—1926 թվերին մղած ճակատամարտերում կոմիված և քաղաքականապես վորք ի շատե գրադեռը, Կանտոնի բանակի հին կազրերը, արագորեն հալվում էին: Նրանց նշանակելի մասը մտավ Յե-Տինի և Հո-Լուինի բանակը կամ յուժովեց գյուղացիական ապստամբված մասունների մեջ, մի մասն էլ Չան-Փա-Գույի հետ անցավ Կանտոն: Այս պարամասերի ղեկգոնությունը՝ ճախ Գոմինդանից, միանալով բանվորների ղեկգոնությանը, պատճառ դարձավ 1927 թվի գեկտեմբերի Ա-ի ապստամբության Կանտոնում:

**ԿԱՆՏՈՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ**

Արդեն 1927 թվի ոգոստոսին Չինաստանի կոմունիստական կուսակցությունն ազատվել էր իր ոպարտունիստ ղեկավարներից, դատապարտել էր նրանց սխալները և ընդգրկել էր բանվորաղյուղացիական շարժումը ծավալելու վճռական ընթացք, Գոմինդանի դեմ յինված պայքար նախապատրաստելու համար: Չնայած Յե-Տինի և Հո-Լուինի բանակի պարտությանը, իրադարձությունը հեղափոխական էր. Ծանհայում ուժգին թափով բարձրացել էր դործազուրկային շարժումը, ապստամբ գյուղացիները քաղաքներ էլին նվաճում Ծանհայի շրջակայքում, Հունանում, Գուանդունում, վորտեղ Կայֆինի և Լուֆինի գալտոներում ամբապես հաստատվել էր Սորհրդային իշխանություն, շարժումը շարունակում էր ծավալվել:

Մանր ապստամբությունների ալեքն ընդգրկել էր Յան-Չեյի ամբողջ հովիտը և ամբողջ հարավը: Սակայն դրանք բոլորն էլ բաժարար չսփոփ նա-



ման և ոտարեկրացիների կողմից Չինաստանի վրին փաթաթած անհավասար պայմանագրերի վերանայման: Նա ուզում էր իր ղեկավարութանը յենթարկել կալվածատերերին և կոմպրադորներին, կաշառել բանվորներին մի մասը և գյուղական կուլակներին ու դառնալ Չինաստանի բուրժուական բարեփոխության ղեկավարը:

Բայց, չնայած Պեկինի գրավման, չնայած Գոմինդանի ձեռնարկած ֆասիստական համարյա ամբողջ Չինաստանում, — բուրժուազիայի այս չափափոր նպատակներն էլ հետո յեն իրականանալուց, չխոսելով արդեն Չինաստանի բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրների լիակատար իրագործման մասին, վորը բուրժուազիայի ուժերից անհասարակ վեր է: Չինաստանի մասնատվածությունը, վորը հետևանք է տարրեր իմպերիալիստներին կողմը հակված մի ամբողջ շարք կլիկների և խմբավորումների գոյությունից Գոմինդանի մեջ, շարունակում է մնալ: առաջ՝ դեպի կապիտալիզմը դնալու փոխարեն, Չինաստանը սահում է դեպի հեռ, դեպի նախահայրապետական կարգերը, շուրհիվ միլիտարիստական սիստեմի ու խմբերիալիստների: Գյուղում դրութան տեր են հանդիսանում առաջվա պես կալվածատերն ու վաշխառուն, վոր հաճախ միանում է մի անձնավորության մեջ, ամբողջ յերկիրը անբուս է հարկերի ծանրության տակ, առևտուրն ու արդյունաբերությունը լճացման վիճակ են սպրում, ամեն մի միլիտարիստ իր սեփական թղթադրամն է սպրում և չրջանառության մեջ մտնում, վորոնք բոլորն էլ ունեն նույն հատկությունը՝ որ-որի վրա կորցնում են իրենց արժեքը, արժեքազուրկ են դառնում: Քայքայումը, սովը, միլիտանավոր գյուղացիների աղքատացումը, ընդ վորում կանգ է առել նաև արտադրական ուժերի աճումը — այս ամենը վոր միայն չի թուլացնում, այլև խորացնում է հեղափոխական կրիզիսը:

Ամերիկյան բուրժուազիան ներկայումս սիրաչափում է նանկինի կառավարությունը, խոստանում է նրան մաքսային ինքնավարություն, խոստանում է ի չիք դարձնել հին պայմանագրերը: Ամերիկյան շահագրգռված և արտադրական ուժերի աճմամբ Չինաստանում, հարկավ վորոչ սահմանափակումներով, բայց և այնպես նույնիսկ Ամերիկյան չի ուզում հրաժարվել իր արտերկրային արտոնություններից, մանավանդ վոր մնացած պետությունները՝ Անգլիան և Ճապոնիան — մտադիր չեն լուրջ դիլյումներ անել Չինաստանին: Նրանց կողմից չինական բուրժուազիային առված խոստումները կախված են ողի մեջ, դրանք խարեութուն դուրս յեկանանգլիացիները նորից խլեցին Հանկոույի անգլիական կոնցեսիան, Ճապոնիան իր «բարյացակամությունը» ցույց տվեց Չինաստանին 1928 թվի մայիսի տեղի ունեցած Յինանի անցքերի փամանակ, յերբ նա արյունայից դատարան տեսավ չինական զինվորների դիմին և իր ձեռքը քցեց Շանդունի նահանգը:

Իմպերիալիստական խմբավորումների միջև մղվող կռիվը ծայր աստիճան դժվարացնում է ինչպես նրանց միասնական յերլույթները, այնպես էլ Չինաստանի իսկական միավորումը, վորովհետև այդ խմբավորումներից յուրաքանչյուրը գործը կապում է «իր» ղեկերայի հետ: Չինական բուրժուազիան

ևս անկարող է կատարել իմպերիալիստներին տված իր խոստումները: Համալիլիտարիստական շարժումը, հակառակ այդ բուրժուազիայի կամքի, աճում է ծավալվում և վորջ Չինաստանում, վերստին ընդգրկելով մանք բուրժուազիային և ինտելիգենցիային, էլ չենք խոսում բանվորների և գյուղացիների մասին:

Ապրիլի 12-ից հետո անցած մեկ և կես տարին քիչ բան տվեց չինական ազգային արդյունաբերական բուրժուազիային: Մանավանդ, վոր այդ փամանակամիջոցում կռիվեց ու ամբացավ պրոլետարական ավանգարդը — Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, վորը մաղել, դուրս է քցել իր շարքերից բոլոր իրեն անհարապտ, վոր բայց չեփկական տարրերը:

Այս պայմաններում հեղափոխական շարժման նոր վերելքը հետո չէ: Թեև բանվորական շարժման մեջ տակավին շարունակվում է սեպտեմբեր (այստեղ էլ նկատելի յե արդեն աշխուժացում — այդ են վկայում վերջին գործադուլները Շանհայում), բայց գյուղացիական ապստամբություններ չեն դողարում: Չնայած սեպտեմբերի ուժերի վորոչ կոնսոլիդացիային, — վոր այսպես կոչված ազգային բուրժուազիային, վոր էլ կալվածատերերին ու կոմպրադորներին չի հաջողվի «խաղաղեցնել» խաղձող չինական գյուղը:

Իսկ քանի դեռ այդ վերելքը վրա չի հասել, չինական կոմկուսակցությունը վիճակված է կազմակերպել և հավաքել իր շուրջը չինական պրոլետարիատի վերջին կռիվներում ցրված ուժերը, նրանց առորյա շահերի պաշտպանության հողի վրա և պատրաստվել առաջնորդելու նրան, գյուղացիության հետ միասին, դեպի պայքար հանուն բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանություն, հանուն բուրժուական-դեմոկրատական հեղափոխության ավարտման Չինաստանում, հանուն նրա ազատագրման իմպերիալիստական լծից և, վերջին հաշվով, հանուն Չինաստանի սոցիալիստական դարդացման:



Faint, illegible text on aged, yellowed paper, possibly bleed-through from the reverse side of the page.



Հայաստանի Ազգային գրադարան  
  
NL0429213

15001

15001



ԳԻՆՆ Ե 15 Կ.

15001  
15001